

# Պատարագի Բացատրություն 1

## Ս. Պատարագ

Պատարագ կը նշանակէ Աստուծոյ մատուցուած ընծայ, նուէր կամ զոհ: Ս. Պարարագը կը բաղկանայ չորս մասերէ՝

1. Պատրաստութիւն:
2. Եախայից Պատարագ - Ճաշու պաշտօն:
3. Հաւատացեալներու կամ բուն Պատարագ:
4. Արձակում:

## Պատրաստութիւն

Պատարագը Վերջին Ընթրիքին կրկնութիւնն է, ինչպէս նաև շարունակութիւնը Գողգոթայի խաչին վրայ Քրիստոսի զոհագործութեան: Ս. հաղորդութեամբ մեզի տրուած հացն ու գինին կը խորհրդանշեն Քրիստոսի ինքզինք զոհելը մեր մեղքերուն քաւութեան և թողութեան համար: Պատարագը սքանչելի արարողութիւն է, կը ներկայացնէ Քրիստոսի կեանքը, գործը և իր ուսուցումները:

Պատարագիչ քահանան աւանդատան մէջ կը զգեստաւորուի սպասարկող սարկաւազին

օժանդակութեամբ նախ քան զգեստաւորումը, աղօթք կը կարդայ իր մեղքերուն թողութեան. իւրաքանչիւր զգեստի մասը հագած ատեն պատարագիչը կ'աղօթէ, որ Աստուած զօրացնէ զինք, մաքրէ իր սիրտը, պաշտպան ըլլայ իրեն և զինք արժանի ընէ պատարագելու: Ապա զգեստաւորուելէն ետք մոմակալներուն և բուրվառակիրին առաջնորդութեամբ եկեղեցւոյ ատեանը կը մտնէ «Խորհուրդ Խորին» շարականով:

- “Խորհուրդ խորին”-ի երգեցողութեամբ դպրաց դասը պատարագիչը կ'առաջնորդէ դէպի եկեղեցի:

- Եթէ բարձրաստիճան է (Եպիսկոպոս, Արքեպիսկոպոս) պատարագիչը կը զգեստաւորուի Համալիրի դահլիճին գրասենեակին մէջ:

Կ'երգուի Խորհուրդ Խորինի փոխարէն «Հրաշափառ»-ը եւ կ'արտասանուի «Լուսցից Սրբութեամբ» Սաղմոսը:

Հանդիսաւոր եպիսկոպոսական պատարագի առիթով՝

Ա) Խաչվառը առջեւէն:

Բ) Մոմակիրները:

Գ) Աղջիկները աջէն, տղաքը ձախ կողմը շարուած:

Դ) Սարկաւազը եւ Բուրվառակիրը:

Ե) Եպիսկոպոսը:

Զ) Քշոցակիրները:

Է) Ժողովուրդը:

- Եկեղեցւոյ մայր մուտքէն մինչեւ դաս կ'երգուի «Հրաշափառ Աստուած» շարականը :

- Դասին մեջ կը շարունին պատարագիչին ընկերակցող դպրաց խումբը հետեւեալ կարգով՝

Խորանին դիտուած դէպի ժողովուրդ առաջին քշոցակիրը, առաջին մոմակիրը, սպասարկող Սարկաւազը, դասին կեդրոնը պատարագիչը, Բուրվառակիրը, երկրորդ մոմակիրը, երկրորդ քշոցակիրը բոլորին դէմքերը դէպի խորան:

- Սարկաւազը Եպիսկոպոսին հետ փոխասացութեամբ կ'արտասանէ “Լուացից սրբութեամբ” սաղմոսը որ սկիզբէն պատրաստած կոնքն ու փարչը ձեռքին ջուր կը թափէ Եպիսկոպոսի ձեռքին՝ “Լուացից սրբութեամբ” սաղմոսի ընթերցման ժամանակ, աւարտին կ'երգուի “Թագաւոր երկնաւոր” պատարագի երգը:

Պատարագիչը Ս. Խորանին առջեւ ձեռքերը կը լուայ, իբրեւ հոգեւոր ներքին մաքրութեան նշան հրապարակաւ անգամ մը եւս իր մեղքերը կը խոստովանի Աստուծոյ, Ս. Աստուածածնին, բոլոր սուրբերուն եւ ներկայ ժողովուրդին, խնդրելով, որ աղօթեն իր մեղքերուն թողութեան համար:

“Եւ վասն Սրբուհւոյ...” Ս. Աստուածածնին ուղղուած է պատարագիչին արտասանած առաջին աղօթքը, որովհետեւ Քրիստոս իր առաջին հրաշքը Ս. Կոյսին միջնորդութեամբ եւ բարեխօսութեամբ կատարեց:

Ապա պատարագիչը դէմքը դարձնելով ժողովուրդին

“ընկալ Տէր...” հրապարակաւ կը խոստովանի ժողովուրդին առջեւ, իր սիրտը մաքրելու համար, ներում խնդրելով ժողովուրդէն: Այստեղ դպրաց դասին եւ ժողովուրդին պարտականութիւնն է աղօթել և բարեխօսել պատարագիչին իր մեղքերուն թողութեան և քաւութեան համար: Պատարագիչին խոստովանութեան այս պահուն մենք ևս պէտք է մտածենք մեր մեղաւոր ըլլալուն, հոգիով սրբանալու և մաքրուելու, մեր մեղքերուն ներում ստանալու համար:

Եթէ ներկայ է այլ եկեղեցական մը եկեղեցոյ մէջ, դասին կեդրոնը գալով կ’արտասանէ՝ “Ողորմեսցի” աղօթքը թողութիւն տալու Աստուծոյ անունով պատարագիչին:

Եթէ պատարագիչէն զատ ուրիշ եկեղեցական չկայ, եկեղեցոյ մէջ «Ողորմեսցի»ն կրնայ սարկաւազ մը կամ դպիրներէն մէկը կեդրոնը գալով արտասանել:

Երկու դպիրներ դէմքերնին դէպի խորան դարձուցած պատարագիչին կողքին փոխասացութեամբ կ’արտասանեն “աղաղակեցէք” 100-րդ Սաղմոսը:  
- Ընդունուած սովորութեան համաձայն մոմակիրները պէտք է արտասանեն՝ “Աղաղակեցէք” սաղմոսը. սաղմոսէն ետք, արտասանողները պատարագիչին աջը իսկ Եպիսկոպոսին ձեռաց խաչը կը համբուրեն:

- Սարկաւազը առաջին քշոցակիրը կը դրկէ երկրորդ

քշոցակիրին քով եւ առաջին մոմակիրը երկրորդ  
մոմակիրին մօտ որպէսզի Ս. Խորան բարձրանան:

Հրապարակային խոստովանութենէն յետոյ  
պատարագիչը համարձակութիւն կ'ունենայ Աստուծոյ  
առջև ներկայանալու և Խորան բարձրանալու:  
Պատարագիչը փոխն ի փոխ 43-րդ “Դատ արա ինձ...”  
սաղմոսը սարկաւագին հետ կ'արտասանէ և դէպի  
Խորան կը բարձրանայ և կ'երկրպագէ մինչ սարկաւագը  
կը խնկարկէ մինչեւ Ս. Բեմին առջեւ: Աստուծոյ առջեւ  
ներկայանալու այս մուտքը կը յիշեցնէ մեզի Ադամի  
արտաքսուած ըլլալը Դրախտէն իր անհնազանդութեան  
համար: Պատարագիչը Ս. Խորան բարձրանալը կը  
խորհրդանշէ երբեմնի մեղաւոր մարդուն Աստուծոյ  
շնորհքին արժանանալը:

### Առաջադրութիւն

Երբ պատարագիչը Ս. Սեղան կը հասնի, « Ի յարկի  
սրբութեան» աղօթքին երբ «խոնարհեալ» բառը  
կ'արտասանէ կը խոնարհի և կը համբուրէ Ս. Սեղանը  
սարկաւագը կը խնկարկէ սեղանին 3 անգամ եւ  
վարագոյրը կը գոցուի:

Վարագոյրը գոցուելէն ետք, դպիրները յաւուր պատշաճի  
մեղեդի կ'երգեն, Սարկաւագը Ս. սեղան կը բերէ  
ընծաները՝ օրհնել տալով նշխարն ու գինին “Եւ եւս

խաղաղութեան զՏէր աղաչեցուք, ընկալ կեցո եւ ողորմեա”, պատարագիչը կ’օրհնէ նշխարն ու գինին ապա կը կարդայ Ս. Նարեկացիին երկու աղօթքները, ապա մատուցուած նշխարը երկիւղածութեամբ Մաղզմային վրայ կը դնէ, գինին խաչանիշ կը լեցնէ սկիհին մէջ և կ’օրհնէ: Պատարագիչը կ’աղօթէ, “Հոգին Սուրբ Եկեացէ” աղօթքը ըսելով բուրվառակիրը կը խնկարկէ 9 անգամ ապա օրհնել կու տայ խունկը ըսելով “Եւ եւս...” պատարագիչը խունկը կ’օրհնէ “օրհնութիւն եւ փառք” ըսելով եւ բոլորը միասին թափօր կը դառնան: Եթէ բարձրաստիճան է պատարագիչը սպասարկող Սարկաւագը կը բռնէ աջ ձեռքով գաւազանը եւ ձախ ձեռքով խնկամանը: Սարկաւագը սկիհը կը տեղաւորէ խորհրդանոցին մէջ:

Եթէ պատարագիչը բարձրաստիճան է «Ի յարկի սրբութեան» աղօթքէն ետք, նախքան վարագոյրին փակուիլը Եպիսկոպոսը խոյրը հանելով և ծունկի գալով Խորանին առջեւ լուռ կը կարդայ Սուրբ Գրիգոր Նարեկացիի աղօթքը, որու ընթացքին դպիրները կ’երգեն «Ընտրեալդ» շարականը:

- Սպասարկող սարկաւագը եւ բուրվառակիրը ծունկի՝ Ս. Սեղանին առջեւ կը բռնեն պատարագամատոյցը: Դպիր մը կ’երգէ “ Ընտրեալդ Աստուծոյ” մեղեդին:

- Քշոցակիրները ծունկի կու գան Եպիսկոպոսին ետեւ եւ շղարշով խոյրը կը բռնեն ի տես ժողովուրդին:

Իսկ եթե պատարագիչը Քահանայ է վարագոյրը կը փակուի, դպիրները կ'երգեն օրուան պատշաճ մեղեդին:

## Պատարագի Բացատրութիւն 2

### Ճաշու պաշտօն

Վարագոյրը կը բացուի, պատարագիչը խնկարկելով կ'իջնէ Ս. Խորանէն մինչ դպիրները կ'երգեն “Բարեխօսութեամբ” կամ այլ թափօրի յատուկ շարական: Հաւատացեալները եկեղեցականին մօտենալով անոր խաչը պէտք է համբուրեն ըսելով “յիշեսջիր եւ զմեզ առաջի անմահ գառինն Աստուծոյ”

Այս բաժինը կը կոչուի նաև “Երախայից Պատարագ”: Թափօրէն մինչեւ վերաբերում, այսինքն ընծաներուն մատուցումը Ս. Սեղանին, կը կոչուի երախայից Պատարագ կամ Ճաշու պաշտօն: Այս բաժինին նպատակն է ժողովուրդը վարժեցնել աստուածապաշտութեան եւ դաստիարակել Աստուծոյ խօսքով, որովհետեւ այս բաժինը առաջին դարերուն կը կատարուէր միայն երախաներուն: Անցեալին անոնք որոնք չէին մկրտուած, այսինքն երախաներն ու ապաշխարանքի մէջ գտնուողները, կրնային ներկայ ըլլալ միայն պատարագի այս բաժնին:

Ճաշու պատարագը նախապատրաստութիւնն է բուն պատարագին: Այս բաժնին մէջ է, որ հաւատացեալներ

հոգեպէս կը պատրաստուին մասնակից դառնալու  
գոհաբերման սուրբ խորհուրդին:

Խունկի գործածութիւնը արարողութեան պահուն շատ  
հին դարերէն կը սկսի (Բ. օրինացն 33.10) խունկը կը  
յիշեցնէ մեր մեծ քահանայապետին Յիսուսի Քրիստոսի  
Աստուծոյ առջեւ կատարած միջնորդութիւնը:

- Խնկարկութիւնը տեսակ մը աղօթք է մեր մեղքերուն  
թողութեան համար կատարուած:

- Խնկարկելը յարգանքի արտայայտութեան ձև է, անոր  
համար Ս. Սեղանին, Սուրբերու պատկերներուն,  
եկեղեցականին առջև կը խնկարկենք:

Թափօրը յիշատակն է Քրիստոսի մարդեղութեան (մարդ  
դառնալուն) երկինքէն երկիր խոնարհելուն և մարդոց մէջ  
շրջագայելուն. պատարագիչը խորանի աջակողմեան  
աստիճաններէն վար կ'իջնէ բուրվառը աջ ձեռքին ձեռաց  
խաչը ձախ ձեռքին, կը խնկարկէ, թափօր կը դառնայ  
եկեղեցոյ մէջ, կ'օրհնէ ժողովուրդը և ձախակողմեան  
աստիճաններէն դարձեալ կը բարձրանայ խորան, իր  
հետ Ս. Սեղան բարձրացնելով հաւատացեալ  
ժողովուրդին խնդրանքը:

Թափօրին համար անհրաժեշտ է՝

- Խաչվառ, 2 մոմակիրներ, 2 քշոցակիրներ, սարկաւազ, բուրվառակիր՝ աջ ձեռքին ձեռաց խաչ եւ ձախ ձեռքին խնկամանը եթէ բարձրաստիճան է պատարագիչը աջ ձեռքին եպիսկոպոսական գաւազանը վեր բռնած եւ ձախ ձեռքին խնկամանը:

- Թափօրի ընթացքին Եկեղեցւոյ ատեանին շուրջ ժողովուրդին մէջ մինչեւ դասի կեդրոնը գալով պատարագիչը կը խնկարկէ ժողովուրդին. մինչ մնացեալ դպիրները ատեանին մօտ կը սպասեն եւ երբ պատարագիչը վերադառնայ միասին բեմ կը բարձրանան: Խաչվառը դասին մէջ կեդրոնը կը կենայ պատարագիչին խնկարկած ատեն, երբ դպրաց խումբը վեր ելլէ՝ խաչը կը տանի աւանդատուն:

Պատարագիչը □խաղաղութիւն ամենեցուն□ ըսելով կը դառնայ և կ'օրհնէ ժողովուրդը: Ամէն անգամ որ քահանան օրհնէ ժողովուրդը բուրվառակիր սարկաւազը պէտք է խնկարկէ Ս. Սեղանին եւ ժողովուրդին իսկ հաւատացեալները պէտք է թեթև խոնարհում ընեն և խաչակնքեն իրենց երեսները իբրև նշան՝ Աստուծոյ շնորհքը ընդունելու:

Երբ սարկաւազը կ'ըսէ «Աստուծոյ երկիրպագեսցուք» պէտք է դարձեալ թեթև խոնարհեցնենք մեր գլուխները կէս մէջքով ծռած և խաչակնքենք:

Պատարագիչը Ս. Աւետարանը համբուրելով կուտայ սարկաւազին որ բարձրացուցած՝ ի տես ժողովուրդին կը

դառնայ Ս. Սեդանին շուրջ՝ հիւսիսէն հարաւ: Մինչ սարկաւազը կը վերաբերէ Ս. Աւետարանը, դպիրները կ'երգեն “Ս. Աստուած Սուրբ եւ հօօր” Երեքսրբեանը օրուան խորհուրդին համաձայն:

- Մոմակիրները եւ քշոցակիրները “ Սուրբ Աստուած” երգեցողութեան ընթացքին աջ կողմ կու գան:

Բուրվառակիրը խնկարկելով կ'առաջնորդէ վերաբերող սարկաւազին: Աւետարան կարդացող Սարկաւազին ետեւէն քշոցակիրները եւ առջեւէն մոմակիրները կը քայլեն:

Կը կարդացուի Ճաշու օրուան Ընթերցուածը, դպիրներէն մէկը սկիզբէն փորձ ըրած կ'ըլլայ եւ ապա կ'երգուի Ճաշու Սաղմոսը “Ալէլուիա յարեաւ Աստուած...”:

Անցեալին Ճաշու գիրքի ընթերցումէն ետք կը տրուէր Քարոզը: Այսօր հաւատացեալներուն թիւը քիչ ըլլալուն պատճառով քարոզը փոխադրուած է “Հայր մեր”-էն առաջ: Եթէ Եպիսկոպոս կամ Թեմի Առաջնորդ է պատարագիչը, Սուրբ Սեդանին երկրպագելով կը նստի խորանին վրայ նախօրօք զետեղուած աթոռին, դպիրներէն մէկը կ'ընթերցէ մարգարեական եւ առաքելական թուղթը ըստ տօնին կամ յաւուր պատշաճի:

- Սարկաւազը Ս. Սեդանին առջեւ կը կարդայ ցած ձայնով օրուան Աւետարանը “ Սրբոյ Աւետարանիս..... Տէրն մեր Յիսուս Քրիստոս...” եւ մի քանի տուն պատարագիչին մօտ ապա անոր օրհնութիւնը ստանալէ

Ետք կ'երթայ դեպի ժողովուրդ ընթերցելու:

Աւարտին Աւետարան կարդացող սարկաւազը երեսը դեպի Արեւելք Խորանին մէջտեղը կանգնած եւ Աւետարանը բարձր բռնած ի տես ժողովուրդին եղանակով կ'արտասանէ Նիկիոյ Հաւատոյ Հանգանակը՝ “Հաւատամք ի մի Աստուած”:

- Հաւատամքի ընթացքին բուրվառակիրին տեղը նկատի պէտք է առնել խորանին վրայ. սպասարկող սարկաւազը Աւետարանը բարձրացուցած պատարագիչին ետեւը կ'ըլլայ, շարքը ըստ հետեւեալի՝ մէկ շարքի վրայ շարուած կ'ըլլան խորանին դիտուած աջէն առաջին քշոցակիր, առաջին մոմակիր, սպասարկող սարկաւազ Աւետարան ձեռքը հանդիսաւորապէս ի տես ժողովուրդին, բուրվառակիր, երկրորդ մոմակիր, երկրորդ քշոցակիր:

Հաւատամքի աւարտին Քահանան Աւետարանը համբուրելով, բարձրաձայն կ'արտասանէ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի կողմէ գրուած Փառաբանական Օրհնութիւնը “Իսկ մեք փառաւորեսցուք”:

Սարկաւազը քահանային Սաղաւարտը կը հանէ “Տէր Աստուած Օրհնեսցէ զամենեսեանդ...” աղօթքէն ետք: Իսկ եթէ Եպիսկոպոս է պատարագիչը կը փակուի վարագոյրը, կը հանէ զարդերը Եմիփորոնը, Խոյրը եւ Հողաթափերը, Արտախուրակները եւ Պանակէն իսկ եթէ քահանայ է, առանց փակելու վարագոյրը կը հանէ

Մաղաւարտը, Լանջախաչը եւ Հողաթափը: “Մարմին տէրունական” երգին խորանին վարագոյրը կը բացուի:

Եթէ հին դարերու մատուցուած Ս. Պատարագին ներկայ գտնուէինք, բաւական հետաքրքրական տեսարանի մը ականատես պիտի ըլլայինք, «Մի ոք յերախայից» երգի ատեն բոլոր չմկրտուածները (երախաներ), թերահաւատները, ապաշխարանքի տակ եղողները, այսինքն զանազան մեղքերով անմաքուր անձերն ու եկեղեցոյ կողմէ պատժուածները դուրս կը հանուէին գաւիթին մէջ աղօթելու համար: Այսօր երբ «Մի ոք յերախայից»-ը կ’երգէ սարկաւազը, մենք պետք է, որ մեր սրտերէն ու մտքէն դուրս հանենք թերահաւատութիւնը, անմաքուր մտածումներն ու զգացումները, վերջապէս մեղքը պետք է որ հեռացնենք մեզմէ և լեցուինք Ս. խորհուրդով:

### Պատարագի Բացատրութիւն 3

**Հաւատացեալներու կամ բուն Պատարագ**

#### **Վերաբերում**

Հաւատացեալներու Պատարագը կը սկսի վերաբերումով, Սարկաւազը բուրվառակիրին ընկերակցութեամբ երկիւղածութեամբ կը մօտենայ խորհրդանոցին՝ կատարելու համար վերաբերումը, մինչ դպիրներէն մին

կ'երգէ սրբասացութիւնը “Հրեշտակային”: Երկու մոմակիրներ դէմ յանդիման խորհրդանոցին առջեւ կը սպասեն:

Սարկաւազը Ս. Սեղանին խնկարկելէ ետք, կը խնկարկէ նաեւ խորհրդանոցին մէջ դրուած Սուրբ Խորհուրդին: Ապա կ'առնէ սկիհը, ըսելով “Յարեւու եհար զխորան իւր, եւ ինքն որպէս փեսայ զի ելանէ յառագաստէ իւրմէ: Ապա սեղանին շուրջ դարձած ատեն, արեւելեան կողմը հասնելով կ'ըսէ “Ճանապարհ արարէք այնմիկ որ նստի յերկինս երկնից ընդ արեւելս” երբ հարաւ կը հասնի կ'ըսէ “Աստուած ի հարաւոյ եկեսցէ, եւ սուրբն ի Փառան լեռնէ”: Յետոյ դէպի հիւսիս դառնալով, ընծաները կը մատուցանէ պատարագիչին, որ նախ Ս. Սեղանին եւ ապա ընծաներուն կը խնկարկէ ըսելով “Համբարձէք....”: Պատարագիչը կը խնկարկէ Ս. Սեղանին եւ երկիւղածութեամբ վերաբերողին ձեռքէն առնելով սկիհը կը խաչակնքէ ժողովուրդին ու կ'ըսէ. “Օրհնութիւն ի բարձունս” բուրվառակիրը կը խնկարկէ ժողովուրդին կը խնկարկէ ընծաներուն: Պատարագիչը մատները կը լուայ ցած ձայնով ըսելով “Լուացից...” որպէս մաքրութեան նշան, որովհետև իր մատները պիտի հպին Փրկչին մարմնին ու արեան:

Ընծային վերաբերումը կը նշանակէ Քրիստոսի կամաւոր երթը դէպի Երուսաղէմ, հոն խաչի վրայ իր արիւնը թափելը Հօր՝ Աստուծոյ ընծայուիլը եւ գերեզման դրուիլը

Եւ իւղաբեր կիներուն Տիրոջ գերեզմանին խունկ բերելը:  
Քահանան Սկիհին քօղը կէս կը բանայ որպէսզի սուրբ  
նշխարը երեւի, մաղզմային եզերքէն:

## Ողջոյն

Սպասարկող սարկաւագը կը խնկարկէ խորանին  
խոնարհելով ողջոյնը կ'առնէ պատարագիչի աջէն եւ Ս.  
Սեղանը համբուրելով եւ կ'իջնէ եւ կու տայ Դասին մէջ  
կեցողին, որ իր կարգին կու տայ ժողովուրդին, եւ անոնք  
ալ իրարու:

- Ողջոյն տուողը կ'ըսէ “Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ”:  
Ողջոյն ստացողը կը պատասխանէ “Օրհնեալ է  
յայտնութիւնն Քրիստոսի”: Եթէ եկեղեցականը ներկայ է  
Դասին մէջ, բուրվառակիրը ողջոյնը կը փոխանցէ 9  
անգամ Սրբագանին իսկ 3 անգամ Տէր Հօր խնկարկելով:  
Իսկ Ս. Խորանին վրայ սպասարկողները համբուրելով կը  
ստանան ողջոյնը Ս. Սեղանէն:

## Սրբագործում

Քահանան, երկրպագելով սեղանին կը բանայ Սկիհին  
քօղը եւ նուիրական հացը իր ձեռքերուն երկու  
բութամատերուն եւ ցուցամատերուն ծայրերով բռնած  
վեր բարձրացնելով բարձրաձայն կ'ըսէ. “Առէք կերէք....”  
մինչ Սարկաւագը երեք անգամ կը խնկարկէ դէմքը

խորանին, Քահանան սկիհը վար դնելով կը խոնարհի:  
Քահանան սուրբ նշխարը մաղզմայով Սեղանին վրայ կը  
դնէ եւ Սկիհը իր ձեռքը առնելով բարձրաձայն կ'ըսէ.

“Արբէք ի սմանէ...” դարձեալ Երեք անգամ կը խնկարկէ  
սարկաւազը դէմքը խորանին:

- Ապա Սուրբ Խորհուրդը սեղանէն քիչ մը  
բարձրացնելով Հօր կ'ընծայէ բարձրաձայն ըսելով “Եւ  
զքոյս ի քոյոց” աղօթքի ժամանակ երբ սկիհը 4 կողմ կը  
տանի պատարագիչը, բուրվառակիրը  
պատարագամատոյցին էջը կը դարձնէ:

- “Որդի Աստուծոյ”-ի ատեն պատարագիչը կ'երկրպագէ  
սեղանին եւ կ'աղօթէ ցած ձայնով բուրվառակիրը  
“Օրհնեա՛ Տէր” կ'ըսէ եւ 3 անգամ կը խնկարկէ  
մաղզմային վրայ դրուած նշխարին ապա եւ “Օրհնեա  
Տէր” 3 անգամ կը խնկարկէ սկիհին ապա “Ամէն եւ  
օրհնեա Տէր” 3 անգամ կը խաչակնքէ Ս. Սկիհին  
նշխարին եւ գինին: Քահանան կը խնկարկէ ընծաներուն  
վրայ, արտասանելով փոխարկման աղօթքը:

Ան կ'աղաչէ երկնաւոր Հօր և կը խնդրէ Անկէ, որ Ս.  
Հոգւոյ ներգործութեամբ ՆՇԽԱՐԸ փոխակերպէ  
Քրիստոսի ՄԱՐՄՆՈՅՆ եւ ԳԻՆԻՆ՝ Քրիստոսի ԱՐԵԱՆ:  
Ապա քահանան Սեղանը համբուրելով քօղով կը ծածկէ  
սկիհը:

**Յիշատակութիւն**

- “Ընդ որս”-ի աղօթքէն ետք յիշատակութեան պահուն խորանին ծառայող դպիրները (քշոցակիր, մումակիր, սարկաւագ, բուրվառակիր, սպասարկող) կը շարուին ըստ յարմարութեան Ս. Սեղանին աջ կողմը: Աւարտին բոլորն ալ կը խոնարհին Ս. Սեղանին եւ իրենց տեղերը կ’երթան:

Սրբոց յիշատակութիւնը կը կատարուի Ս. Սեղանի աջակողմը, որովհետև սուրբերը արդէն արժանացած են աջակողմեան վերին դասին: Յիշատակութեան բաժինը Ս. Պատարագի արարողութեան մէջ Աստուծոյ դատաստանը ներկայացնող արարք է: Պատարագիչը ծածուկ կ’աղօթէ ողջերուն և ննջեցեալներուն համար, կը յիշէ իրմէ աղօթք խնդրողները, անոնց խնդրանքները Աստուծոյ կը յայտնէ: Այս պահուն մենք մեր ննջեցեալներուն հոգիները պէտք է յիշենք և իրենց համար աղօթենք: Մեր աղօթքին մէջ պէտք է նաև յիշենք բոլոր անոնք, որոնք բարի նպատակի համար աղօթք խնդրած են: Պատարագիչը կը խնդրէ սէր, կայունութիւն եւ խաղաղութիւն շնորհէ ամբողջ աշխարհին, Ս. Եկեղեցիին, ուղղահաւատ եպիսկոպոսներուն, քահանաներուն, սարկաւագներուն ղեկավարներուն եւ ամբողջ ժողովուրդին: Կը խնդրէ նաև որ Աստուած օղի բարեխառնութիւն շնորհէ, անդաստաններուն պտղաբերութիւն եւ զանազան հիւանդութիւններէ տառապողներուն առողջութիւն:

Պատարագիչը “Աստուածածնին սրբոյ կուսին ...”  
բառերով կը հրաւիրէ Աստուածամայրը, Ս. Յովհաննէս  
Մկրտիչն ու Ստեփանոս Նախավկան մասնակից  
դառնալու Ս. Պատարագի խորհուրդին:  
Յիշատակութեան մէջ հանդիսաւոր կերպով կը  
յիշատակուին յաղթական եկեղեցւոյ լոյս դէմքերը:  
Պատարագիչ քահանան իր աղերսանքը Աստուծոյ  
ուղղելով՝ յիշատակութիւնը կը կատարէ հայոց  
հայրապետներուն և շրջանի թեմի Առաջնորդին և անոնց  
երկար կեանք կը մաղթէ. ապա սարկաւազը ձախ կողմ  
կու գայ “գոհութիւն եւ փառաբանութիւն” քարոզը  
երգելու, որովհետև աջ կողմը սուրբերու ժողովն է, որոնք  
երկնքի մէջ Աստուծոյ մօտ են. իսկ ձախ կողմը անցնիլ կը  
նշանակէ կենդանի հաւատացեալներու ժողովին  
միանալ, որոնք աշխարհի մէջ են և տակաւին մեղքի մէջ,  
որոնք կը փափաքին արժանանալ սուրբերու դասին:  
Պատարագիչը բարձրաձայն կ’ըսէ. “Եւս առաւել...”

Քահանան գլուխը խոնարհելով սկիհին առջեւ եւ զայն  
համբուրելով կ’ըսէ “Ի սրբութիւն սրբոց” երեք անգամ կը  
խնկարկէ սարկաւազը:

Մինչ դպրաց դասը կ’երգէ հետեւեալ երկու երգերը ի  
փառաբանութիւն Քրիստոսի եւ Ս. Երրորդութեան  
“Միայն Սուրբ” եւ “Ամէն Հայր Սուրբ”, պատարագիչ  
քահանան կ’աղօթէ որ ինք եւ ամբողջ ժողովուրդը  
արժանի համարուին ստանալու Յիսուս Քրիստոսը Ս.

Հաղորդութեամբ:

Ապա քահանան երկրպագելով կը համբուրէ Սեղանը եւ մաղզման վերցնելով Սկիհին վրայէն կը դնէ Սեղանին վրայ եւ նշխարը վերցնելով ամբողջութեամբ կը թաթխէ գինիին մէջ, ապա Սկիհը նշխարով ձեռքը առած կը դառնայ դէպի ժողովուրդը եւ քիչ մը առջեւ գալով Սկիհը բարձրացուցած կ'ըսէ. “Ի սուրբ ի սուրբ...”: Սարկաւագը երեք անգամ խորանին եւ երեք անգամ ժողովուրդին կը խնկարկէ:

- “Ի Սուրբ ի Սուրբ” աղօթքէն ետք վարագոյրը կը գոցուի: Տէր հայրը յայտարարութիւն կ'ընէ ապա Խոստովանանքը կը կարդայ սարկաւագը եւ պատարագիչը թողութիւն կը շնորհէ:

Դպիրները կը սկսին երգել “Տէր Ողորմեա”ն: Այստեղ պէտք է դադրեցնեն քշոցակիրները իրենց քշոցները: “Տէր Ողորմեա” աղերսանքը հաւատացեալներուն համար շատ սիրելի է: Ան Հայց. Եկեղեցւոյ Պատարագի երգեցողութեան մէջ մուտք գործած է 18-րդ դարու վերջաւորութեան՝ Սիմէոն Երևանցի կաթողիկոսին տնօրինումով: Կը դրսևորէ հաւատացեալներուն ներքին զգացումները եւ մաղթանքները՝ առողջութեան, գործի յաջողութեան, աշխարհի խաղաղութեան, ննջեցեալներու հոգիներու փրկութեան և իղձերու ու փափաքներու իրականացման համար:

**Խոստովանանք**

## Հաղորդութիւն

Անոնք որոնք կը փափաքին հաղորդուիլ պէտք է խոստովանին իրենց մեղքերը թողութիւն ստանալու համար: Դպիրներէն մէկը ծունկի գալով եկեղեցւոյ ատեանին մէջ, կը կարդայ «Չղջում»ը: Խոստովանանքը կը կատարուի հոգեւորականին ներկայութեամբ: Խոստովանողը պէտք է յիշէ իր խղճին վրայ ծանրացած մեղքերը եւ իւրաքանչիւր զղջումի պարբերութեան աւարտին «եղայ Աստուծոյ» ըսէ:

«Քրիստոս պատարագեալ»-ի երգեցողութեան ընթացքին, բուրվառակիրը Մասը Խորանէն վար կ'իջեցնէ. եթէ հոգևորական կայ դասին մէջ՝ օրհնել կուտայ Աւագ երէցին, այլապէս Խորանին վրայ պատարագիչը կ'օրհնէ, բուրվառակիրը զայն բանկալ թաղականութեան կը յանձնէ ժողովուրդին բաժնելու համար: Մաս բաշխողը տալու ատեն պէտք է ըսէ “Մա եղիցի քեզ բաժին Սրբոյ Պատարագիս”: Իսկ ստացողը պէտք է ըսէ “ Բաժին իմ Տէր եղիցի”:

Մասը պարզ, անխմոր, բաղարջ հաց է: Մասը յիշատակ մնացած է առաջին դարերու սիրոյ ճաշի սեղանէն: Այդ օրերուն երբ քրիստոնէաները փոքրաթիւ էին, սուրբ Պատարագի արարողութենէն յետոյ հաւատացեալներ կը սարքէին սիրոյ ճաշի սեղանը և միասնաբար կը ճաշէին ու զԱստուած կ'օրհնէին: Սակայն, երբ հաւատացեալներուն թիւը բազմապատկուեցաւ, սիրոյ ճաշի ընթացքին անկարգութիւններ սկսան յառաջ գալ:

Ուստի եկեղեցիներ սկսան զանց ընել հաւաքական սիրոյ ճաշի սեղանը: Սակայն Ս. Պատարագի արարողութեան վերջաւորութեան սկսան միայն հաց բաժնել ու պահել սիրոյ ճաշի յիշատակը: Մասը սրբագործուած չէ, և ոչ ալ ընծայաբերուած, այլ պարզապէս օրհնուած է հոգևորականին աղօթքով: Մաս կը նշանակէ կտոր, բաժին, նկատելով որ իւրաքանչիւր հաւատացեալ այս օրհնուած հացէն կտոր մը, բաժին մը կը ստանար, ժամանակի ընթացքին այս հացը կոչուեցաւ Մաս: “Երկիւղիւ եւ հաւատով ...” սարկաւագի քարոզին կը բացուի վարագոյրը, պատարագիչ քահանան կը դառնայ ժողովուրդին, կը ծնրադրէ՝ հաղորդելու համար հաւատացեալները, մինչ դպիրները կ’երգեն «Այսօր Անճառ» շարականը:

- Ս. Հաղորդութիւն ստանալու ժամանակ պատարագիչին 2 կողմերը քշոցակիրները ծունկի կու գան եւ դենջակը կը բռնեն:

Հաղորդութիւն կը նշանակէ մասնակցութիւն, յարաբերութիւն , միացում: Նախ պատարագիչ քահանան ինք կը հաղորդուի, ապա՝ ժողովուրդը: Երբ Ս. Սեղանին կը մօտենանք Ս. Հաղորդութիւն ստանալու համար պէտք է իսաչ հանել, մեղայ Աստուծոյ ըսել, Ս. Հաղորդութիւնը կլլել, իսկ կիները պէտք է որ ծածկեն իրենց գլուխները և տղամարդիկ՝ հանեն իրենց գլխարկները:

Հաղորդութիւնը կը տրուի լեզուին, ընդունելի չէ սրբութիւնը ափին մէջ առնել: Հաղորդուելէ առաջ պէտք է

նուագագոյնը վեց ժամ ստամոքսը պարապ պահել և չուտել: Այս պայմանը ի զօրու չէ հիւանդներուն և յղի կանանց համար: Ս.Հաղորդութիւն ստացողը եկեղեցւոյ մէջ պէտք է իր տեղը վերադառնայ և սպասէ Ս.

Պատարագի արարողութեան աւարտին:

Հաղորդութենէ յետոյ երբ Քահանան ոտքի կը կանգնի դպիրները կ'երգեն. “Աստուած մե՞ծ...” պատարագիչը կ'օրհնէ ժողովուրդը ըսելով “Կեցո՛՛ Տէր զժողովուրդս ...” սարկաւազը կը խնկարկէ:

Պատարագիչը կը դառնայ դէպի Ս. Սեղան եւ վերստին կը քաշուի վարագոյրը: Ան կը լուայ Սկիհը եւ իր ձեռքերը, կը դնէ Սաղաւարտը եւ կը հագնի Հողաթափները: Սարկաւազը Սկիհը խորհրդանոցին մէջ կը զետեղէ: Եթէ պատարագիչը եպիսկոպոս է՝ կը հագուի Խոյրը, Եմիփորոնը, Արտախուրակները և կը դնէ Պանակէն:

## Արձակում

### Վերջին Օրհնութիւն

Ս. Պատարագի աւարտին, Քահանան կ'արտասանէ “Որ օրհնես զայնոսիկ” աղօթքը, որուն ընթացքին կ'աղօթէ ամբողջ աշխարհի խաղաղութեան եւ հաւատացեալներու երջանկութեան եւ բարօրութեան: Աղօթքի աւարտին պատարագիչը կը խոնարհի, կը

համբուրէ Ս. Սեդանը եւ Աւետարանը ձեռքը՝  
ձախակողմեան աստիճաններէն վար կ'իջնէ, մինչ  
դպիրներ երիցս կը գովերգեն Տիրոջ անունը ըսելով.  
“Եղիցի անուն Տեառն...” խնկարկող սարկաւազին  
առաջնորդութեամբ:

- Եթէ բարձրաստիճան է պատարագիչը օրհնութիւնը  
վերջին Աւետարանը խորանէն կը կարդացուի: Երգող  
դպիրները կամ սպասարկող Սարկաւազները կը բռնեն  
Աւետարանը, մոմակիրները ու քշոցակիրները երկու  
կողմերը կու գան, դէմքերնին դէպի ժողովուրդ:

Եթէ հոգեհանգստեան արարողութիւն պիտի  
չկատարուի, «Կատարումն օրինաց» աղօթքէն ետք  
պատարագիչը կը կարդայ արձակման Աւետարանը,  
սպա «Պահպանիչ» աղօթքով կը խնդրէ որ Աստուած  
պահէ, պահպանէ և օրհնէ հաւատացեալ ժողովուրդը:  
Քահանան կը խաչակնքէ Ս. Աւետարանով ժողովուրդին  
եւ կ'արտասանէ «Պահպանիչ»ը եւ սարկաւազը կը  
խնկարկէ:

Պատարագիչը կը դառնայ դէպի Արեւելք եւ  
երկրպագութիւն կ'ընէ բեմին առջև եւ կ'ըսէ «Տէր Յիսուս  
Քրիստոս ողորմէ ինձ» եւ մտնելով աւանդատուն կը  
հանէ զգեստները եւ կ'արձակուի խաղաղութեամբ:

- Աւետարանի աւարտին Դպիրները կ'իջնեն խորանէն եւ  
կը շարուին 2 կողմերը որպէսզի “Ուրախ լեր” շարականի  
երգեցողութեամբ հանդիսաւոր թափօրով առաջնորդեն

դէպի դահլիճ բարձրաստիճան եկեղեցականը իր զգեստը հանելու:

- Խաչվառ-Մոմակիրներ - Սարկաւազ - Դպրաց Դաս - Բուրվառ - Տէր Հայր - Եպիսկոպոս - Քշոց:

### Հոգեհանգիստ

“Հոգեհանգիստ”ը Հայ Եկեղեցւոյ մէջ աւանդութիւն մըն է, որուն համաձայն ընտանիքներ մասնաւոր հոգեհանգստեան պաշտօն կը խնդրեն իրենց հարազատներուն մահուան քառասուրբի կամ տարելիցին առթիւ: Պատարագիչ քահանան Ս. Պատարագի աղօթքներու ընթացքին կը յիշէ մահացածներու անունները եւ կարճ արարողութիւն մը կը կատարուի Ս. Պատարագի աւարտին:

Անոնք որոնք Ս. Պատարագի ընթացքին հոգեհանգիստ կատարել պիտի տան, պէտք է նկատի ունենան որ անհրաժեշտ է եկեղեցւոյ մէջ իրենց ներկայութիւնը Ս. Պատարագի սկիզբէն, մասնակցելու համար աղօթքներուն, որովհետեւ պատարագիչը իր լուռ աղօթքներուն մէջ կը յիշէ մեր բոլոր ննջեցեալները: Հայ Եկեղեցւոյ վարդապետութեան համաձայն, մահացած մարդիկ կը մտնեն հանգիստի ժամանակաշրջանի մը մէջ՝ մինչ սպասելով Տիրոջ փառաւոր երկրորդ գալստեան՝ աշխարհի վերջաւորութեան: Թէեւ բաժնուած Քրիստոնէական

համայնքէն, հանգիստի մէջ գտնուող հոգիները կը շարունակեն մաս կազմել հաւատացեալներուն. անոնք կը հանգչին եկեղեցւոյ հովանիին տակ: Ուստի, մենք կ'աղօթենք անոնց համար, ինչպէս կ'աղօթենք մեր բոլոր երկրաւոր հոգերուն համար: Մեր աղօթքներուն նպատակն է որ անոնք հանգչին խաղաղութեամբ եւ Աստուած ներէ անոնց բոլոր մեղքերուն, զանոնք արժանացնէ յաւիտենական կեանքի Հօրը թագաւորութեան մէջ՝ Քրիստոսի երկրորդ գալստեան: Մահացածներու համար մեր աղօթքը յայտարարութիւնն է մեր հաւատքին Քրիստոսի երկրորդ գալստեան մասին եւ մեր յոյսը մեռելներու յարութեան նկատմամբ: Երբ Հայ եկեղեցին կանոնաւորաբար կ'աղօթէ մեռեալներու համար, մենք կ'անդրադառնանք որ այս կեանքը անցաւոր է եւ յոյսով կը հաւատանք թէ մահն ալ անցաւոր բնոյթ ունի:

Հոգեհանգստեան արարողութենէն յետոյ Պատարագիչը կը դառնայ դէպի Արեւելք եւ երկրպագութիւն կ'ընէ բեմին առջև եւ կ'ըսէ «Տէր Յիսուս Քրիստոս ողորմէ ինձ» եւ մտնելով աւանդատուն կը հանէ զգեստները եւ կ'արձակուի խաղաղութեամբ:

Պատրաստեց՝

Արամ Քահանայ Տէյիրմէնճեան

Հոգևոր Հովիւ Արաբական Միացեալ Էմիրութեանց